ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«_____» _____ 2010թ. N_____Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Անվանափոխել Երևան համայնքի ենթակայության մի շարք առևտրային կազմակերպությունները՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան իրականացնել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների ֆիրմային անվանման պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2010 թվականի _____-ի
N _____ որոշման

Ց Ա Ն Կ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Անվանափոխված կազմակերպության անվանումը
1.	Երևանի քաղաքապետարանի «Երևաննախագիծ» ՊՓԲԸ	«Երևաննախագիծ» ՓԲԸ
2.	Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ	«Քաղաքաշինություն» ՓԲԸ
3.	Երևանի քաղաքապետարանի «Նոր բարեկարգում» ՊՓԲԸ	«Նոր բարեկարգում» ՓԲԸ
4.	Երևանի քաղաքապետարանի «Ջրային կառույցների» ՓԲԸ	«Ջրային կառույցների» ՓԲԸ
5.	Երևանի քաղաքապետարանի «Երքաղլույս» ՊՓԲԸ	«Երքաղլույս» ՓԲԸ
6.	Երևանի քաղաքապետարանի «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՊՓԲԸ	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ
7.	Երևանի քաղաքապետարանի «Բնակչության հատուկ սպասարկում» ՊՓԲԸ	«Բնակչության հատուկ սպասարկում» ՓԲԸ
8.	Երևանի քաղաքապետարանի «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ
9.	Երևանի քաղաքապետարանի «Հայ-Արտ» Մշակութային կենտրոն ՓԲԸ	«Հայ-Արտ» Մշակութային կենտրոն ՓԲԸ
10.	Երևանի քաղաքապետարանի «Զնավորում» ՊՓԲԸ	«Զնավորում» ՓԲԸ
11.	Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնությունների» ՊՓԲԸ	«Հողի և ունեցվածքի գործառնությունների» ՓԲԸ
12.	Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ
13.	Երևանի քաղաքապետարանի «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	«Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ
14.	Երևանի քաղաքապետարանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲԸ
15.	Երևանի քաղաքապետարանի «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲԸ
16.	Երևանի քաղաքապետարանի «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն»	«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ

	ԱՊՓԲԸ	
17.	«Շտապբուժօգնություն» ԱՊՓԲԸ	«Շտապբուժօգնություն» ՓԲԸ
18.	Երևանի քաղաքապետարանի «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ԱՊՓԲԸ	«Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ
19.	Երևանի քաղաքապետարանի «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» ՊՓԲԸ	«Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ
20.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 4 բուժսանմաս» ԱՊՓԲԸ	«Թիվ 4 բուժսանմաս» ՓԲԸ
21.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 5 բուժսանմաս» ԱՊՓԲԸ	«Թիվ 5 բուժսանմաս» ՓԲԸ
22.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 1 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ
23.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 4 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ
24.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 5 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ
25.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 7 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 7 պոլիկլինիկա» ՓԲԸ
26.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 8 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ
27.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 12 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ
28.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 13 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ
29.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 15 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ
30.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 17 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ
31.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 19 պոլիկլինիկա» ԱՓԲԸ	«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ
32.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 20 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ
33.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ
34.	Երևանի քաղաքապետարանի «Նորագավիթ պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ
35.	Երևանի քաղաքապետարանի «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ	«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ
36.	Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» ՓԲԸ	«Երևանտրանս» ՓԲԸ
37.	Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ
38.	Երևանի քաղաքապետարանի «Ավտոբուս» ՓԲԸ	«Ավտոբուս» ՓԲԸ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևան համայնքի ենթակայության մի շարք առևտրային կազմակերպություններն անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը սահմանելու մասին» N604-Ն 1-ին 3-րդ հոդվածի համաձայն Երևանի քաղաքապետարանի ենթակայության մի շարք առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասը սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան քաղաքին: Փոխանցված մի շարք կազմակերպություններ կրում են <<Երևանի քաղաքապետարանի պետական փակ բաժնետիրական ընկերություն>> ֆիրմային անվանումը, որը չի համապատասխանում գործող օրենսդրության պահանջներին, մասնավորապես՝ <<Երևանի քաղաքապետարան պետական կառավարչական հիմարկի>> գործունեությունը դադարեցվել է, իսկ ՓԲԸ-ներն այլևս պետական չեն: Բացի այդ, ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման և նշված ընկերությունների պետական ռեգիստրի վկայականների միջև առկա են անվանումների հակասություններ: Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը՝ անհրաժեշտություն է առաջացել անվանափոխել Երևան համայնքի մի շարք առևտրային կազմակերպությունները:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևան համայնքի ենթակայության մի շարք առևտրային կազմակերպություններն անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

«Երևան համայնքի ենթակայության մի շարք առևտրային կազմակերպություններն անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի ավագանու որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ